## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

<< 15 >> << օգոստոսի >> 2019թ. N ՀՔ12/341-2019

Ք. Արմավիր

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի օգոստոսի 12-ի 01/32.1/11225-2019 հանձնարարականը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներին տրամադրվող սուբվենցիոն ծրագրերով իրականացվող ճանապարհաշինական ծրագրերը որակյալ և պատշաճ կատարելու նպատակով.

***որոշում եմ՝***

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Հ. Կուրղինյան)՝ իրականացվելիք հսկողության և անհրաժեշտ լաբարատոր փորձարկումների արդյունքները յուրաքանչյուր ամիս ուսումնասիրել, վերլուծել, կազմել եզրակացություն և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կարեն Գրիգորյանին:
4. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (փոխարինող Ա. Վասիլյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Մարզպետ՝*** ***Հ. Մաթևոսյան***

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Invalid signature

X

VERIFIED OCSP 8/15/2019 11:03:01 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2019 թվականի օգոստոսի 15 -ի*
*N ԾՊ/341-2019 որոշման*

*Աշխատանքային խմբի կազմը*

**Աշխատանքային խմբի ղեկավար՝**

Հ. Կուրղինյան
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Հ. Էքիզյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ |
| Ռ. Երվանդյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ |
| Գ. Հովհաննիսյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար |

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 15.08.2019 09:25:15 GMT+4

*Գլխավոր քարտուղարի փեղակալ՝*
*Ա. Հովհաննիսյան*

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023